Համառոտակի ուրվագծելով Ակոռու Ս. Հակոբա վանքի «Քյոթուկի» աղբյուրագիտական նշանակությունը, կարծում ենք, որ ծավալով ոչ մեծ, սակայն բովանդակությամբ ինքնատիպ և որպես սկզբնաղբյուր որոշակի գիտական արժեք ներկայացնող այս բնագրի հրապարակումը, կարող է օգտակար հանդիսանալ ուշ միջնադարի պատմության, վերը ընդգծված և այլ հարցերի լուսաբանման համար։

Բնագրից զեղչված են միայն 1բ—5ա էջերի փառաբանական հատվածներն ու յուրաքանչյուր նվիրատուի անվանը նախորդող «Աստուած օրհնէ» արտահայտությունը։ Ինչպես սկզբի «յիշատակագրութեան», այնպես նաև հետագա տասնամյակներում, տարբեր գրիչների ձեռքով կատարված գրառումների ուղղագրությունը պահպանել ենք նույնությամբ։ Տողատակում տրված են միայն օտար բառերի և տերմինների ծագումն ու իմաստը լուսաբանող խիստ համառոտ բացատրություններ։

* * *

1ա Յաղագս հոգևորական անջնջելի յիշատակագրութիւն ի սուրբ եկեղեցիս Սբ. Յակոբայ սքանչելագործ հայրապետի, զոր բովանդակեալ զամենայն զգեստի մի ըստ միոջէ, ըստ չափու հաւատոց և ըստ կարողութեան ընչից, շարակարգեցաք զամենայն և բացայայտեմք ի սուրբ տեղիս՝ առաջի ահաւոր և փրկագործ անմահ պատարագիս յականջս ձեր։ Զի և դուք ով աստուածասէր և ուղղադաւան միահամուռ ժողովուրդք՝ մեծամեծք և փոքունք, արք և կանայք, ծերք և տղայք, պարտիք մտադրութեամբ ունկն դնել և ամենայն ընծայաբերաց ի սուրբ եկեղեցիս՝ օրհնել և Աստուած-ողորմի ասել միաբանութեամբ, զի և դուք ընկալջիք մասն և բաժին ի սրբոցն Աստուծոյ || (1բ) առատաձիր ողորմութիւն ի բարերարէն Աստուծոյ աստ հազարապատիկ և բիւրապատիկ և ի միւսանգամ գալստեան նորայ՝ զերկնից արքայութիւնն ժառանգեսջիք ընդ ամենայն ննջեցելովք ձերովք. ամէն։

Բայց յառաջ քան զյիշատակարանսն կարդալոյ, պարտիմք ամենեքեան օրհնութիւն, գոհութիւն և փառս մատուցանել ամենասուրբ Երրորդութեան...*։

5բ Աստուած ողորմի ասացէք միաբանութեամբ Փշրկէնց Մահդասի Հայրապետին և իւր որդի մահդասի խօճայ Մարգարէին, որ ետուն ընծայ սուրբ եկեղեցւոյս Ա. (1) զառ[1] շուրջառ, Բ. (2) մեծ խաչ, Ա. (1) մարգարտաշար վակաս, Բ. (2) ջուխտ[2] ծնծղայք, Ա. (1) բեմի խաչկալի պատկեր, || (6ա) Ա. (1) Աստուածաշունչ, Ա. (1) Յայսմաւուր, Ա. (1) [Ճա]շու գիրք, Ա. (1) մագաղաթեայ Շարակնոց, Ա. (1) խալիչայ[3], Ա. (1) ֆռանգի քիմխայ[4] շուրջառ, Ա. (1) արծաթէ կանթեղ, քաշն ՃԸ. (108) մսխալ,[5], Գ. (3) զառ եաղլուխ[6],

* Ձեռագրի 1բ—5ա էջերը ունեն գոհաբանական բովանդակություն։

1 պրսկ. زر — ոսկեգույն, ոսկեքանված։

2 պրսկ. جفت — զույգ

3 պրսկ. قالیچه — փոքրիկ գորգ։

4 պրսկ. کمخا — մետաքսյա գունավոր զարդարուն գործվածք։

5 արաբ. مثقال — թանկարժեք մետաղների քաշի միավոր, որ հավասար էր 4,72 գրամի։

6 Թրք. یایلیق — թաշկինակ։